ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԸ ՏԵՂԵԿԱՑՆՈՒՄ Է ԿԱՍԵՑՎԱԾ ՆԵՐՔԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանը տեղեկացնում է, որ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղարի 2021 թվականի հուլիսի 1-ի N 617-Ա հրամանի համաձայն՝ վերսկսում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 94-1.4-Մ2-3) կասեցված ներքին մրցույթի դիմումների ընդունումը և անցկացումը:

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 94-1.4-Մ2-3) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացվող մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները պետք է անձամբ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարան (ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7, մարզպետարանի վարչական շենք) ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1. դիմում (ձևը լրացվում է տեղում),

2. անձնագիր և (կամ նույնականացման քարտ՝ պատճեններով (եթե անձը նույնականացման կամ սոցիալական քարտ չի ներկայացնում, ապա անհրաժեշտ է ներկայացնել անձին հանրային ծառայության համարանիշ տրամադրելու մասին տեղեկանք կամ հանրային ծառայության համարանիշի տրամադրումից հրաժարվելու մասին տեղեկանք՝ պատճեններով),

3. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ՝ պատճենով,

4. աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթուղթ՝ պատճենով,

5. արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկ՝ պատճենով կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայական՝ պատճենով,

6. մեկ լուսանկար՝ 3X4 չափսի:

Մրցույթին մասնակցելու համար դիմումներն ընդունվում են 2021 թվականի **հուլիսի 1-ից** մինչև 2021 թվականի **հուլիսի 7-ը** ներառյալ՝ աշխատանքային օրերին:

Դիմումները յուրաքանչյուր աշխատանքային օրը ընդունվում են ժամը **10:00-ից 12:30-ը և 14:30-ից 17:00-ը**:

Մրցույթի թեստավորման փուլը կանցկացվի 2021 թվականի **օգոստոսի 3-ին՝ ժամը 15:00-ին**, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի վարչական շենքում (հասցե՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի 2021 թվականի **օգոստոսի 5-ին՝ ժամը 15:00-ին**, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի վարչական շենքում (հասցե՝ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի **«Հարցարան»** ձևաչափով:

Հիմնական աշխատավարձը 212300 (երկու հարյուր տասներկու հազար երեք հարյուր) ՀՀ դրամ է: Նշված պաշտոնին հավակնող անձը պետք է լինի բարեկիրթ, պարտաճանաչ, հավասարակշռված, գործնական, ունենա նախաձեռնողականություն և պատասխանատվության զգացում:

Թեստում ընդգրկվող մասնագիտական գիտելիքների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են հետևյալ բնագավառներից՝

ՀՀ Սահմանադրություն. հոդվածներ՝ 1-2, 5-8, 10, 14-16, 18, 20-21, 25, 27, 32, 35-38, 40-41, 44, 46-47, 49, 57, 58, 64, 70, 72-73, 103 հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=143713

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք. հոդվածներ՝ 4, 10, 12, 17, 22-23, 34, հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=152139

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք. 1, 4, 6, 9, 14, 17, 31, 53 հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=151484

«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք. հոդվածներ՝ 10, 18, 20, 22-24, 38, հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=138910

«Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենք. հոդվածներ՝ 3, 5-8, 18-21 , հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=147130:

«Կրթության մասին» ՀՀ օրենք. հոդվածներ՝ 3-4, 6, 10, 12, 15, 18, 23, 24, 35, 46, հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=149890:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք. հոդվածներ՝ 3, 4, 7-9, 11-12, 15, 21, 25, հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=153802:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի **«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգը հաստատելու մասին» N 319-Ն հղումը՝** https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=149938:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի «**ՀՀ կառավարության որոշումը «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական հիմնարկները վերակազմակերպելու, «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը հաստատելու, ՀՀ կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի N 661 որոշման մեջ փոփոխություններ կատարելու եվ 1996 թվականի մայիսի 15-ի N 150 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1392-Ն հղումը՝** https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=149945:

Գրավոր խոսք: Վազգեն Գաբրիելյան, երրորդ լրամշակված հրատարակչություն, Լիմուշ հրատարակչություն, Երևան 2012, էջեր՝ 70-111: Հղումը՝ http://www.parliament.am/library/books/gravor-khosq.pdf:

Ինֆորմատիկա 7-րդ դասարան:

Ա 971, Ս. Ս. Ավետիսյան, Ա.Վ.Դանիելյան: Երևան, Տիգրան Մեծ, 2012: Հղումը՝ https://fliphtml5.com/fumf/egdx

Թեստում ընդգրկվող կոմպետենցիաների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են տվյալ պաշտոնի համար սահմանված և Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ հղումը՝ https://www.gov.am/am/announcements/item/346/:

Հրապարակված ընդհանրական կոմպետենցիաներից, մասնավորապես.

«Խնդրի լուծում» Հղումը՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/4.pdf

«Հաշվետվությունների մշակում» Հղումը՝
https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/6.pdf

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները մրցույթի վերաբերյալ հարցերի և լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժին (հասցե՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7, մարզպետարանի վարչական շենք, հեռախոսահամար՝60650626, էլեկտրոնային փոստի հասցե՝ gegharquniq.andznakazm@mta.gov.am):

Հավելված N 68
ՀայաստանիՀանրապետության
Գեղարքունքիմարզպետարանի
գլխավորքարտուղարի
2019 թվականիդեկտեմբերի 20-ի N 1149-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ

1. Ընդհանուրդրույթներ
1.1Պաշտոնիանվանումը, ծածկագիրը Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի(այսուհետ՝ Մարզպետարան) կրթության, մշակույթի և սպորտի վարչության (այսուհետ՝ Վարչություն) կրթության բաժնի (այսուհետ՝ Բաժին)գլխավոր մասնագետ (այսուհետ՝ Գլխավոր մասնագետ)(ծածկագիրը՝94-1.4-Մ2-3) **1.2Ենթակա և հաշվետու է** Գլխավորմասանգետնենթակա և հաշվետու է Բաժնիպետին **1.3Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները** Գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի մյուս Գլխավոր մասնագետներից մեկը կամ Բաժնի ավագ մասնագետը: **1.4 Աշխատավայրը** Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
2. Պաշտոնի բնութագիրը
2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները 1. Իրականացնում է Ճամբարակի տարածքի /այսուհետ՝ Տարածք/ մարզային ենթակայության հանրակրթական հաստատությունների գործունեության կազմակերպման հետ կապված աշխատանքները: Ուսումնասիրում է նրանց գործունեությունը, ցուցաբերում է անհրաժեշտ մեթոդական օգնություն:

2. Իրականացնում է Տարածքի նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենսդրության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի կատարումը, կրթական և դաստիարակչական ծրագրերի իրականացմանը՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան:
3. Հրավիրում է Տարածքի մարզային ենթակայության հանրակրթական հաստատությունների տնօրենների խորհրդակցություններ, կատարում է ուսումնական գործընթացի ուսումնասիրություններ, աջակցում է դպրոցական առարկայական և մարզական օլիմպիադաներ, մրցումներ, մշակութային միջոցառումների կազմակերպմանը:
4. Իրականացնում է Տարածքում տարվող պետական կրթական քաղաքականության իրականացման գործառույթները:
5. Մասնակցում է Բաժնի աշխատանքային ծրագրերի մշակմանը:
6. Իրականացնում է Տարածքի մարզային ենթակայության հանրակրթական հաստատություններին դասագրքերով, ուսումնամեթոդական ձեռնարկներով, ծրագրերով և ուսումնանյութական պարագաներով ապահովելու գործընթացը, դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը, օժանդակում է նրանց ընդգրկելու ուսումնական հաստատություններ:
7. Իրականացնում է Տարածքի մարզային ենթակայության հանրակրթական հաստատություններում փոխադրական և ավարտական քննությունների նախապատրաստում և անցկացումը:
8. Իրականացնում է դպրոցների կառավարման խորհուրդների ձևավորման աշխատանքները:
9. Իրականացնում է Մարզպետարանի կողմից տարվող աշխատանքները՝ կապված հեռավոր, բարձր լեռնային և սահմանամերձ գյուղերի դպրոցները ուսուցիչներով ապահովման, հաշվառման և ֆինանսավորման հետ:
10. Իրականացնում է Տարածքում գործող պետական գրանցում ունեցող կրոնական կազմակերպությունների հետ համագործակցությունը:
11. Իրականացնում է Տարածքում ֆիզիկական կուլտուրայի պետական ծրագրերի իրագործման աշխատանքները:
12. Իրականացնում է Տարածքում մանկապատանեկան սպորտի զարգացման պետական ծրագրերի իրականացման գործընթացը:
13. Իրականացնում է հանրակրթական դպրոցների նյութատեխնիկական բազայի ամրապնդման աշխատանքները:
14. Մշակում և Բաժնի պետին է ներկայացնում Տարածքում կրթության զարգացման առաջնային ուղղություններն ու ծրագրերը:
15. Իրականացնում է մարզային ենթակայության ուսումնական հաստատությունների գործունեության և դրանց բարելավմանը նպատակաուղղված ծրագրերի մշակումը:

16 .Անցկացնում է մարզական-մասսայական միջոցառումների տարածքային փուլերը և ապահովում դպրցական թիմերի մասնակցությունը մարզային և հանրապետական փուլերին:

Իրավունքները՝

1. Պահանջել Մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատություններից ներկայացնել անհրաժեշտ հիմնավորումներ, փաստաթղթեր և այլն:
2. Պահանջել Մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատություններից ներկայացնել օրենդրությամբ սահմանված անհրաժեշտ տեղեկատվությունը:
3. Մարզպետարանի տարբեր ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ կազմակերպել աշխատանքային քննարկումներ:
4. Մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատություններից ստանալ մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ:
5. Ներկայացնել առաջարկություններ՝ Բաժնի աշխատանքներին մասնագետներ, փորձագետներ, գիտական հաստատությունների ներկայացուցիչներ ներգրավելու և աշխատանքային խմբեր կազմավորելու համար:
6. Բաժնի պետին ներկայացնել առաջարկություն մարզային ենթակայության կրթական կազմակերպությունների շենքերի կառուցման, պահպանման, շահագործման վերաբերյալ:
7. Նախապատրաստել, վերլուծել և համապատասխան առաջարկություններ ներկայացնել Բաժնի պետին՝ Տարածքի կրթական հաստատությունների գործունեության բարելավման վերաբերյալ:

Պարտականությունները՝

1. Ուսումնասիրել պահանջված (ներկայացված) փաստաթղթերի ամբողջական փաթեթը:
2. Իրականացնել ներկայացված փաստաթղթերի՝ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանության ստուգում:
3. Ուսումնասիրել կրթության ոլորտը կարգավորող իրավական ակտերը և ներկայացնել համապատասխան մասնագիտական առաջարկություններ:
4. Սահմանված ժամկետներում և կարգով ներկայացնել համապատասխան մարմիններից ստացված տեղեկատվության ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ համապատասխան առաջարկություններ:
5. Ներկայացնելզեկուցագրեր՝ իրկողմիցսպասարկվողոլորտինառնչվողհամապատասխանմարմիններումկ ատարվողաշխատանքներիվիճակիմասին:
6. Նախապատրաստել Բաժնի առջևդրված գործառույթներիցևխնդիրներիցբխողիրավականակտերինախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրերևայլ գրություններ, ինչպեսնաևդրանցվերաբերյալմեթոդականպարզաբանումներևուղեցույցեր:

3.Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

1	ՈՒղղություն	Կրթություն	Հումանիտար գիտություններ և արվեստ

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրայինծառայությանառնվազներկուտարվաստաժկամ երեք տարվամասնագիտականաշխատանքայինստաժկամ կրթության բնագավառում՝ երեք տարվաաշխատանքայինստաժ: **Փոփ. 27.02.2020թ. N321**

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1.Ծրագրերի մշակում

2..Խնդիրների լուծում

3.Հաշվետվությունների մշակում

4.Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն

5.Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1.Բանակցությունների վարում
2.Բողոքների բավարարում
3.Ժամանակի կառավարում
4.Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
5.Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
6.Փաստաթղթերի նախապատրաստում

4.Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման կամ դիմումների քննարկման արդյունքում որոշումների նախապատրաստման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտական գործունեության տարածքային ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: